ՖԻՆՍ ԱՈՒԴԻՏ ՓԲԸ

Հասցե՝ք. Երևան, Պարոնյան 9 բն. 12

Էլ. հասցե՝info@fins.am

Հեռ՝+374 60 525 025

FINS AUDIT CJSC

Address:Yerevan, Paronyan str. 9 h. 12

Email:info@fins.am

Phone:+374 60 525 025

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Էներգո Ինվեստ Հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջը և Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էներգո Ինվեստ Հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և նրա դուստր (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանքներ

«Էներգո Ինվեստ Հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերության 2024թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով այդ հաշվետվությունների վերաբերյալ 2025թ. Հունիսի 6-ին ատրահայտել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և Տնօրենների խորհրդի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին

ՖԻՆՍ ԱՈՒԴԻՏ ՓԲԸ

Հասցե՝ք. Երևան, Պարոնյան 9 բն. 12

Էլ. հասցե՝info@fins.am

Հեռ.՝+374 60 525 025

FINS AUDIT CJSC

Address:Yerevan, Paronyan str. 9 h. 12

Email:info@fins.am

Phone:+374 60 525 025

համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության գործունեության անընդհատության դադարեցմանը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«ՖԻՆՍ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ

13 Մայիսի 2026թ.

ՀՀ, ք. Երևան

Տնօրեն Արմինե Ավագյան

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազ. դրամ	*Ծան.*	*2025թ.*	*2024թ.*
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	4,447,929	4,602,896
Ոչ նյութական ակտիվներ և գուդվիլ	12	18,996	194,845
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	13	39,179	50,374
Տրամադրված փոխառություններ	14	115,994	135,513
Ոչ ընթացիկ ակտիվներ		**4,622,098**	**4,983,628**
Պաշարներ		42,084	41,340
Տրամադրված փոխառություններ	14	33,656	20,014
Ընթացիկ հարկային ակտիվներ		3,088	3,088
Բանկային ավանդներ	15	271,297	284,543
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	16	301,691	343,509
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17	1,258,004	493,609
Ընթացիկ ակտիվներ		**1,909,820**	**1,186,103**
Ընդամենը ակտիվներ		**6,531,918**	**6,169,731**
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ		2,706	2,706
Պահուստներ		(158,424)	(158,424)
Կապիտալի բաշխում		(6,546,632)	(6,389,090)
Չբաշխված շահույթ		9,534,368	8,612,890
Ընկերության սեփականատերերին վերագրելի սեփական կապիտալ		**2,832,018**	**2,068,082**
Չհսկող բաժնեմասեր		667,485	695,032
Ընդամենը սեփական կապիտալ	18	**3,499,503**	**2,763,114**
Պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	19	-	107,811
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	286,774	351,382
Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորություններ	22	165,400	127,775
Վարձակալության գծով պարտավորություններ	20	33,327	42,548
Ոչ ընթացիկ պարտավորություններ		**485,501**	**629,516**
Վարկեր և փոխառություններ	19	1,009,417	543,427
Վարձակալության գծով պարտավորություններ	20	9,221	9,221
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	21	1,379,643	2,091,206
Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորություններ	22	96,847	29,077
Ընթացիկ հարկային պարտավորություններ		51,786	104,170
Ընթացիկ պարտավորություններ		**2,546,914**	**2,777,101**
Ընդամենը պարտավորություններ		**3,032,415**	**3,406,617**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**6,531,918**	**6,169,731**

Հաստատվել և ստորագրվել է խմբի ղեկավարության կողմից 2026թ. Մայիսի 13-ին:

Շավարշ Հայրապետյան
Գլխավոր տնօրեն

1-26 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	*Ծան.*	*2025թ.*	*2024թ.*
Հասույթ	5	2,205,699	2,307,206
Վաճառքի ինքնարժեք	6	(765,625)	(845,040)
Համախառն շահույթ		**1,440,074**	**1,462,166**
Վարչական ծախսեր	7	(451,280)	(502,552)
Այլ եկամուտ	8	80,779	34,214
Այլ ծախսեր		(57,708)	(51,126)
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)		**1,011,865**	**(78,946)**
Ֆինանսական եկամուտ		246,109	296,936
Ֆինանսական ծախսեր		(133,214)	(178,912)
Զուտ ֆինանսական եկամուտ/(ծախս)	9	**112,895**	**118,024**
Շահույթ/(վնաս) նախքան շահութահարկով հարկումը		**1,124,760**	**1,060,726**
Շահութահարկի գծով հատուցում/(ծախս)	10	(230,829)	(255,214)
Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)		**893,931**	**805,512**
Շահույթ/(վնաս) վերագրելի՝			
Ընկերության սեփականատերերին		921,478	869,165
Չհսկվող բաժնեմասերին		(27,547)	(63,653)
Հաշվետու տարվա ընդամենը համապարփակ եկամուտ/(վնաս)		**893,931**	**805,512**

1-26 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. Դրամ	*Բաժնետիրական կապիտալ*	*Պահուստներ*	*Կապիտալի բաշխում*	*Չբաշխված շահույթ*	*Ընդամենը*	*Չհսկող բաժնե-մասեր*	*Ընդամենը սեփական կապիտալ*
Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.	**2,706**	**(158,424)**	**(6,389,090)**	**7,743,727**	**1,198,919**	**758,685**	**1,957,604**
Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)	–	–	–	869,165	869,165	(63,653)	**805,512**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ/(վնաս)	**–**	**–**	**–**	**869,165**	**869,165**	**(63,653)**	**805,512**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**2,706**	**(158,424)**	**(6,389,090)**	**8,612,890**	**2,068,082**	**695,032**	**2,763,114**
Մնացորդը առ 1 հունվարի 2025թ.	**2,706**	**(158,424)**	**(6,389,090)**	**8,612,890**	**2,068,082**	**695,032**	**2,763,114**
Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)	–	–	–	921,478	921,478	(27,547)	**893,931**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ/(վնաս)	**–**	**–**	**–**	**921,478**	**921,478**	**(27,547)**	**893,931**
Գործառնություններ Խմբի սեփականատերերի հետ							
Այլ բաշխումներ	–	–	(157,542)	–	(157,542)	–	(157,542)
Ընդամենը գործառնություններ Խմբի սեփականատերերի հետ	**–**	**–**	**(157,542)**	**–**	**(157,542)**	**–**	**(157,542)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.	**2,706**	**(158,424)**	**(6,546,632)**	**9,534,368**	**2,832,018**	**667,485**	**3,499,503**

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	***2025թ.***	***2024թ.***
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)	893,931	805,512
Ճշգրտումներ հետևյալ հոդվածների գծով		
Ֆինանսական ակտիվների արժեզրկումից վնաս/(վնասի հակադարձումից եկամուտ)	10,590	-
Մաշվածություն և ամորտիզացիա	409,699	545,820
Վնաս հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից	4,921	4,166
Ֆինանսական երաշխավորության գծով եկամուտ	(52,148)	(31,376)
Զուտ ֆինանսական ծախս/(եկամուտ)	(112,895)	(118,024)
Շահութահարկի գծով (հատուցում)/ծախս	230,829	255,214
Փոփոխություններ հետևյալ հոդվածներում.		
Պաշարներ	(744)	(24,071)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	41,818	(19,437)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(711,563)	(103,775)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր՝ նախքան շահութահարկի և տոկոսների վճարումը	**714,438**	**1,314,029**
Վճարված շահութահարկ	(347,609)	(225,317)
Վճարված տոկոսներ	(44,676)	(67,401)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր	**322,153**	**1,021,311**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(61,545)	(190,560)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(17,417)	(9,905)
Տրամադրված փոխառություններ	-	(700)
Տրամադրված փոխառությունների մարում	3,720	7,627
Ստացված տոկոսներ	206,302	120,550
Բանկային ավանդների տեղաբաշխում	-	(84,000)
Ներդրումային գործունեությունից ստացված/ (ներդրումային գործունեության համար օգտագործված) դրամական հոսքեր	**131,060**	**(156,988)**
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Ստացված վարկեր փոխառություններ	552,790	
Վարկերի և փոխառությունների մարում	(231,850)	(671,894)
Վարձակալության վճարումներ	(9,221)	(15,460)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր	**311,719**	**(687,354)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**764,932**	**176,969**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի	493,609	319,684
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(537)	(3,044)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	**1,258,004**	**493,609**